ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ռաֆիկ Նահապետյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ)

Հիմնաբառեր. *Հայկական լեռնաշխարհ, անասնապահական մշակույթ, հնագույն կենտրոն, տեղաբնիկ ցեղեր, կարգացում, ձիաբուծություն, Արցախ, Աքեմենյան ժամանակաշրջան, տնտեսություն:*

Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ցեղերի տնտեսության հիմնական ճյուղերից մեկն է եղել անասնապահությունը: Էնեոլիթյան (Ք.ա. V-IV հազ. 1-ին կես) մշակույթին բնորոշ բնակատեղիներում Շամիրամ-Ալթի (Վան քաղաքից մեկուկես կմ հեռավորության վրա), Թեղուտ, (Էջմիածնից մոտ երկու կմ հեռավորության վրա), Ակնաշեն, Առատաշեն (Արմավիրի մարզ), Քյուլ-թափա (Նախիջևան), Ալիքմեկ-թեփե, Գարգալար-թեփե (միլիղարաբաղյան տափաստան), Շուլավերիս-Գորա, Իմիրիս-Գորա (ներկայիս Վրաստան՝ Կախեթ), հայտնաբերվել են ոչ միայն լավ պահպանված նմուշներ, մետաղե, ոսկրե ու քարե հարյուրավոր գործիքներ, երկրագործության, արհեստների, առավելապես խեցեգործության բազմապիսի առարկաներ, այլև՝ ցուլերի, կովերի, այծերի, ոչխարների, խոզերի ոսկորների բազմաքանակ գտածոներ: Դրանք առավել չափով հայտնաբերվել են Վանաձորի մոտ՝ Քոսի ճոթեր, Շենգավիթ և այլ բնակատեղիներում[1]: Այդ գտածոները կարևոր սկզբնաղբյուրներ են ոչ միայն տնտեսության հիմնական ճյուղերը, այլև կենցաղային և մշակութային աղերսների մանրամասներն ուսումնասիրելու համար[2]: Շենգավիթում հայտնաբերված հնէակենդանաբանական նյութերում մանր եղջերավոր անասունների ոսկորները մոտ երկու անգամ գերազանցում են խոշոր եղջերավոր անասունների ոսկորների քանակը: Այս փաստը համադրելով ազգաբանական տվյալների հետ՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ վաղ բրոնզի դարաշրջանում տնտեսության առաջատար ճյուղը երկրագործությունն էր, քանի որ անասնապահության առաջատար տնտեսաձև լինելու դեպքում այդ հարաբերակցությունը կկազմեր 8:1[3]:

Խոշոր եղջերավոր անասուններն օգտագործվել են երկրագործության մեջ որպես քաշող ուժ և մանր եղջերավոր անասունների հետ միասին ապահովել են նաև մսի, կաթնամթերքների, կաշեգործության, մանածագործության աճող պահանջները: Հայկական լեռնաշխարհի ամբողջ կենդանական աշխարհը «կարելի է կարդալ» ժայռապատկերներում: Կենդանիների մի մասն այժմ իսպառ վերացել է Հայաստանից, դամբարաններում հայտնաբերվել են միայն դրանց պեղածո մնացորդները:

Վաղ բրոնզի դարաշրջանում (Ք.ա. 3500-2400/2300 թթ.) պեղումներից հայտնաբերված նյութերը հաստատագրում են ոչ միայն երկրագործության, այլև անասնապահության զարգացման բարձր մակարդակի մասին: Հառիճի պեղումներից հայտնաբերվել է շան արձանիկ, որն ըստ Ս. Մեժլումյանի՝ պատկերում է հովվի շուն: Պեղումների ընթացքում հայտնաբերվել են նաև խոզի,

** Հոդվածը ներկայացվել է 27.04.2020 թ., գրախոսվել՝ 10.05.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] Տե՛ս Խանզադյան Է., Հայկական լեռնաշխարհի մշակույթը III հազարամյակում մ.թ.ա., Ե., 1967, էջ 40-41:

[2] Տե՛ս Թորոսյան Ռ., Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը, Ե., 1979; Եսայան Ս., Հայաստանի հնագիտություն, Ե., 1992; Чубинишвили Т., К древней истории Южного Ковказа, Тбилиси, 1971; Мунчаев Р., Кавказ на заре бронзового века, Москва, 1975; Энеолот СССР, Москва, 1982; Бадалян Р., Аветисян П., Ломбард П., Шатенье К., Поселение Араташен, «Հին Հայաստանի մշակույթը», XIII. Ե., 2005, էջ 34-41:

[3] Տե՛ս Есаян С., Ереван, Е.,1969, с. 15.

ձիու ոսկորներ[1]: Անասնապահության զարգացման բարձր մակարդակի մասին է վկայում նաև Ասլան-թեփեում (Մալաթիա) պեղված սպանդանոցը[2]:

Հնագիտական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արդեն միջին բրոնզի դարաշրջանի (2400/2300-1500 թթ. Ք.ա.) սկզբում մանր եղջերավոր անասունների գլխաքանակի մեծ աճը հանգեցրել է սարվորային՝ հեռագնա անասնապահությանը՝ հասարակական արտադրության նոր, ավելի առաջավոր ձևի կիրառմանը[3]:

Ավելի ցայտուն ու որոշակի են անասնապահության զարգացումն ուրվագծող նյութերը: Մանր ու խոշոր ընտանի կենդանիների կմախքների կողքին հայտնաբերվել են նաև ձիերի և շների ոսկորներ, որոնց օգտագործումը տնտեսության մեջ կապված էր կիսաքոչվորական անասնապահության վերելքի հետ: Լեռնային գոտիներում տարածված էր անասնապահության նստակյաց ձևը, ընդ որում երկրագործական տնտեսության մի մասն էր կազմում ջրովի խոտհարքների մշակումը (Գեղամա լեռներ, Արագածի լանջեր): Մանր և խոշոր եղջերավոր անասունների քանակական աճը հավելյալ արժեքի կուտակման, փոխանակության ու առևտրի հուսալի բազա է դառնում:

Հայկական լեռնաշխարհի բնակչության տնտեսական կյանքի զարգացման մի նոր աստիճան է ուշ բրոնզի (Ք.ա. 1500-1200 թթ.) և վաղ երկաթի (Ք.ա. 1200-820 թթ.) դարաշրջանները:

Հայաստանի դաշտային շրջաններում նույնպես զարգանում էր անասնապահությունը, որտեղ հիմնական կենդանիները խոշոր եղջերավոր անասուններն էին, որոնք լայնորեն օգտագործվում էին երկրագործության մեջ որպես քաշող ուժ: Կարմիր բլուրի նախաուրարտական բնակավայրերում հայտաբերված ընտանի կենդանիների ոսկրաբանական մնացորդները, ըստ հնեակենդանաբան Ս. Մեժլումյանի դիտումների, ցույց են տալիս, որ խոշոր եղջերավոր անասունների թիվը տափաստանային բնակատեղիներում մոտավորապես չորս անգամ ավելի էր մանր եղջերավոր անասունների թվից[4]:

Գեղարքունիքում, Արցախում և այլուր ուշ բրոնզի դարից զբաղվում էին տոհմական ձիաբուծությամբ: Լճաշենի, Առաջաձորի, Դիլիջանի, Վանաձորի և այլ շրջանների դամբարաններում մարդկանց կմախքներից բացի գտնվել են ձիերի ամբողջական կմախքներ, իսկ նրանց գլուխներն ու ձիասարքի մասերը հանդիպում են պարբերաբար[5]:

Ք.ա. VIII դ. սկզբից Հայկական լեռնաշխարհը թևակոխեց երկաթի լայն տարածման դարաշրջան: Թեյշեբաինիի, Էրեբունիի և Արգիշտիխինիլիի հնագիտական նյութերը հաստատում են, որ երկրագործության հետ մեկտեղ անասնապահությունը եղել է Վանի թագավորության բնակչության հիմնական տնտեսական զբաղմունքը: Անասնապահության մեջ կարևոր է եղել նաև ձիաբուծությունը: Ձիերը օգտագործվում էին ոչ միայն տնտեսության մեջ, այլև ռազմական գործում: Առանձին նշանակություն են ունեցել ջորին, ավանակը, որոշ տեղերում նաև ուղտը: Ըստ Բ. Պիոտրովսկու՝ ուրարտացիները բուծել են հետագա ժամանակաշրջաններին բնորոշ բոլոր կենդանիներին[6]: Անասնապահական և ձիաբուծական խոշոր կենտրոն էր Սևանի ավազանը՝ տարբեր կողմերից հարող բարձրադիր լեռնային հովիտներով: Ուրարտական արձանագրություններից մեկում ասվում է, որ ուրարտական թագավոր Սարդուրի Բ-ը (Ք.ա. 764-735 թթ.) միայն մի արշավանքի ժամանակ քշել է 214 հազար գլուխ մանր, 40 հազար 353 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, ինչպես նաև 3500 ձի[7]: Ասորեստանի արքա Սարգոն Բ-ը Ք.ա. 714 թ. դեպի Ուրարտու կատարած արշավանքի ժամանակ Մուսասիրից քշել է 100 հազար 225 գլուխ ոչխար,

---

[1] *Տե՛ս Межлумян С., Палеофауна эпохи энеолита бронзы и железа на территории Армянского нагорья, Е., 1972, с. 165-172.*

[2] *Տե՛ս Palmieri A., Excavations at Aslantepe, Malatia, As vol XXXI, pp. 207-208.*

[3] *Անասնապահության զարգացման հեռագնա ձևի իրականացման մասին տե՛ս Пиотровский Б., Развитие скотоводства в древнейшем Закавказье, «Советская археология» (այսուհետ՝ СА), XXIII, 1955, № 1, с. 6.*

[4] *Տե՛ս Межлумян С., նշվ. աշխ., էջ 166-188:*

[5] *Տե՛ս Խանպաղյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է., Մեծամոր , Ե., 1973, էջ 64-67:*

[6] *Տե՛ս Пиотровский Б., Археолигия Закавказья, Л., 1949, с. 73-75.*

[7] *Տե՛ս Հարությունյան Ն., Ուրարտական թագավորության տնտեսությունը, «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1, Ե., 1971, էջ 373:*

920 խոշոր եղջորավոր անասուն, 692 ջորի և ավանակ[1]: Ասորեստանյան գրավոր աղբյուրներում հիշատակվում է Ուրարտուում անթիվ անհամար խոշոր ու մանր եղջերավոր անասունների, այդ թվում՝ ձիերի և ջորիների հոտերի վերաբերյալ[2]:

Վանա լճից հարավ-արևմուտք անասնապահությունը զգալի մակարդակի է եղել Շուպրիա-Ուրմեում՝ Սասունի լեռներում, Մալաթիայում: Ասորեստանյան թագավոր Ասարխադդոնը իր 673 թ. Ք.ա. արձանագրություններից մեկում խոսելով Շուպրիա երկիր կատարած արշավանքի մասին, հատուկ տեղ է հատկացնում այդ երկրի խոշոր և մանր եղջերավոր անասունների հոտերի, ինչպես նաև նրանց խնամքը տանող հովիվների մասին[3]: Որպես անասնապահության հնագույն կենտրոններ հիշատակվել են նաև Արածանիի վերին հոսանքում ընկած «Տուարածիի հովիտը (հայկ. Տուարածատիփ), Դիաուխի (Տայք), Ջաբախա (հայկ. աղբյուրների՝ Ջավախք), Տարիունի (հայկ. Դարույնք), Աբիլիանի (հայկ. աղբյուրներում՝ Աբեղանք), Էթիունի, Էրիախի (հայկ. աղբյուրներում Շիրակ)» և այլ երկրները[4]:

Հայկական լեռնաշխարհում անհամեմատ թույլ զարգացած է եղել խոզաբուծությունը, զբաղմունք, որը իր զարգացման չափանիշներով զիջել է խոշոր եղջերավոր անասնապահությանը և ոչխարաբուծությանը[5]: Խոզաբուծությունը անհամեմատ տարածում է գտել անտառաշատ շրջաններում՝ Տավուշում, Լոռիում, Սյունիքում, Արցախում[6]:

Ք.ա. VI-IV դարերում՝ Աքեմենյան ժամանակաշրջանում, հին Հայաստանի տնտեսությանը վերաբերող տեղեկությունները հանդիպում են հիմնականում հունահռոմեական անտիկ սկզբնաղբյուրներում՝ Հերոդոտոսի, Քսենոփոնի և այլոց աշխատություններում: Այսպես, Հերոդոտոսը (Ք.ա. 484-425 թթ.) հայերին անվանում է «անասուններով հարուստ ժողովուրդ»: Նա բառացի գրում է. «Արմենները առատ հոտեր ունեն»[7]: Հերոդոտոսը հավաստում է, որ Հայաստանի հարավ-արևմտյան կողմերը՝ «Թոգարմա տունը» (Թորգոմա տուն), և որ նրա հարստության գլխավոր աղբյուրը կազմում էր անասնապահությունը, հանգամանք, որ նույնես (նավերով Հայաստանից Բաբելոն արտահանվող գինու առևտրի - Ռ.Ն.) հաստատված է այլ գրավոր աղբյուրներով և հնագիտական նյութերով: Հայաստան երկիրը ակտիվ մասնակցություն է ունեցել Փյունիկեի համաշխարհային վաճառանոցում, նաև իր ընտիր ձիերի և մանավանդ ջորիների վաճառքով[8]: Դա հաստատված է նաև Հերոդոտոսին հաջորդած Քսենոփոնի, Ստրաբոնի և նրանցից շատ առաջ ասորեստանյան և ուրարտական սեպագիր արձանագրությունների՝ Հայաստանում ձիաբուծության և տեղական ձիերի բարձր համարման, ավանակաբուծության մասին վկայություններով: Գյուղատնտեսության և կենդանիների բուծման մասին վկայություններն այստեղ հայտնվում են Միջագետքի հայտնի հնագույն բնակատեղիների ժամանակներից շատ չանցած: Հայերը տիրել են արոտավայրերով հարուստ տարածքների: Ինչ վերաբերում է հայ-արմենների անասնապահական հմտություններին, ինչպես Դարեհ Ա-ի նախորդների ժամանակ, Ք.ա. 519 թվականից հետո ևս հայերը Պարսկաստանին տալիս էին հետևակ և ձիավոր զորք[9]:

Անտիկ դարաշրջանի հունական պատմագրության մեկ այլ՝ «Ատտիկյան մեղու» բնութագրումն ստացած պատմագիր, գրող Քսենեփոնը (Ք.ա. 430-356 թթ.) բացառիկ արժեքավոր տեղեկություններ է թողել հայ-արմենների տնտեսամշակութային կյանքի վերաբերյալ: Նրա «Կյուրոպեդիա» և «Անաբասիս» աշխատությունները նաև հայ կյանքի մի ամբողջ դարաշրջան են լուսաբանում: Նրա հաղորդած տեղեկությունները Հայաստանի (Արմենիայի) մասին միանգամայն արժանահավատ են ու վստահելի, որովհետև ինքն անձամբ է եղել Արմենիայում և նկարագրել այն

---

[1] *Տե՛ս նույն տեղում, էջ 374:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 370-371:*

[3] *Տե՛ս Հարությունյան Ն., Ուրարտական թագավորության տնտեսությունը, էջ 371:*

[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 372:*

[5] *Տե՛ս Даль С., Результаты изучения млекопитающих из раскопок урартского города Тейщебаини, «Известия Академии наук Армянской ССР», общественные науки, Е., 1952, № 1, с. 75-86.*

[6] *Տե՛ս նույն տեղում:*

[7] *Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը՝ Ս. Կրկյաշարյանի, Ե., 1986, գ. V, 49, էջ 305:*

[8] *Տե՛ս նույն տեղում, գ. I, էջ 194:*

[9] *Տե՛ս Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում (մ.թ. 66 թ.), Երկեր, հ. Ա, Ե., 1977, էջ 56:*

իբրև ականատես: Պատմագիրը Արմենիան անվանել է «ընդարձակ ու բարեկեցիկ երկիր», Արմենիայում «պարենն առատ էր», «նրանք արդեն ունեին անհրաժեշտ բոլոր տեսակի պարենի և բարիքների առատություն, մորթելու անասուններ, հաց, անուշահոտ հին գինիներ, չամիչ, ամեն տեսակ ընդեղեն»[1]: Քսենոփոնը հայերին ներկայացնում է ոչ միայն որպես երկրագործ, այլև անասնապահությամբ զբաղվող ժողովուրդ, Հայաստանը համարում է խոշոր և մանր եղջերավոր անասուններով հարուստ երկիր, թվարկում է իր տեսած հայերի տներում՝ կով, այծ, ոչխար, ձի, թռչուններ, այնուհետև ոչխարի, այծի և խոզի միս, խոզի ճարպ[2]: «Կյուրոպեդիա» երկասիրության մեջ էլ հիշատակված է, թե Հայաստան երկիրը «ամբողջությամբ բնակեցված է, այն լիքն է ոչխարներով, այծերով, արջառներով, ձիերով, հացահատիկով և ամեն տեսակ բարիքներով»[3]: Սովորություն է եղել պահել մսացու անասուններ, որոնք անկասկած, ծառայել են թե՛ սննդի ապահովման և թե՛ վաճառահանման ու ապրանքափոխանակման համար: Անասնապահության զարգացվածությունը երևում է այն բանից, որ, ըստ Քսենոփոնի արմենները կարիք ունեին լրացուցիչ արոտների, քանզի լեռնային արոտատեղերը գտնվում էին լեռները քաշված խալդայների ձեռքին: Ի վերջո, երկու կողմերը գալիս են փոխադարձ համաձայնության՝ արոտներից անվտանգ, համատեղ օգտվելու համար[4]: Բացի այն, որ անասնապահությունը հայերի տնտեսության մեջ կարևոր տեղ է գրավել, որ արմենները կիրառում էին հեռագնա անասնապահության եղանակը. անասուններին բարձրացնում էին ալպիական բուսականությամբ հարուստ ամառային արոտավայրերը[5]: Պատմիչը զանազան առիթներով ցույց է տվել, որ զարգացած է եղել ձիաբուծությունը՝ հեծելազորը սեփական ձիերով ապահովելու, ինչպես նաև Պարսկաստանին ձիահարկ տալու նպատակով: Քսենոփոնի հաղորդման համաձայն՝ հույները ձերբակալում են գյուղում գտնվող բոլոր գյուղացիներին ու գյուղապետին, նաև «թագավորին որպես տուրք սնուցվող տասնյոթ մտրուկների, ինչպես և գյուղապետի աղջկան, որն ինն երորդ օրն էր, ինչ ամուսնացած էր: Իսկ նրա ամուսինը գնացել էր նապաստակ որսալու...»[6]: Գեղջավագին ուղղված հարցին, «թե ձիերը ու՞մ համար են բուծվում, նա պատասխանեց, թե՝ արքայի համար իբրև տուրք»[7]: Քսենոփոնը նաև հաղորդում է, որ գեղջավագը իրեն և մյուս զորավորներին ու վաշտապետերին ևս տվել է մեկական մտրուկ. «...Եվ դեռ առաջներում իր ավար վերցրած պառավ ձին նվիրեց գեղջավագին, որպեսզի սնուցի ու զոհաբերի, քանզի լսել էր, որ այն նվիրաբերված էր Հելիոսին (Արևի աստվածությանը - Ռ.Ն.): Ինքը վերցրեց մտրուկներից մեկը, և մյուս (զորավարներին ու) վաշտապետերին ևս տվեց մեկական մտրուկ»[8]: Այնուհետև գովում է հայկական ձիատեսակը՝ ճկունությունն ու դիմացկունությունը նկատի ունենալով. «Այստեղ [նկատի ունի Հայաստանում - Ռ.Ն.] ձիերը փորք էին պարսկականներից, բայց ավելի կայտառ են»[9]: Այնուհետև գյուղապետի խորհրդով հունական հեծելազորի ձիերը փրկվում էին սառչելուց. «Գեղջավագը սովորեցրեց ձիերի և գրաստների ոտքերին ձյան միջով գնալիս պարկեր փաթաթել, քանզի առանց պարկերի անասունները մինչև փորը խրվում էին ձյան մեջ»[10],– գրում է պատմիչը: Ձիաբուծության նպատակասլաց զարգացմանը նպաստում էր ընդարձակ արոտավայրերի առկայությունը Հայկական լեռնաշխարհում: Ձին հայոց մեջ հնուց ի վեր գործածվել է հիմնականում ռազմական արվեստում և միայն՝ հազվադեպ՝ տնտեսության մեջ:

Հայաստանի բնության, աշխարհագրության, պատմության ու հատկապես տնտեսամշակութային բնութագրի ուսումնասիրության համար բացառիկ նշանակություն ունեն, հելլենիստական դարաշրջանի անգնահատելի ու ճշմարտապատում հանրագիտարանային սկզբնաղբյուրի՝

---

[1] *Քսենոփոնի, «Անաբասիս», թարգմանությունը՝ Սիմոն Կրկյաշարյանի, Ե., 1970, IV, 9, էջ 93:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, IV, IV, էջ 156:*

[4] *Տե՛ս Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմանությունը՝ հունարեն բնագրից և ծանոթագրությունները՝ Ս. Կրկյաշարյանի, Ե., 2000, III, II, էջ 112-113:*

[5] *Տե՛ս նույն տեղում, VII, III, էջ 329:*

[6] *Քսենոփոն, Անաբասիս, IV, 24, էջ 97:*

[7] *Նույն տեղում, IV, 34, էջ 98:*

[8] *Նույն տեղում, IV, 35, էջ 98:*

[9] *Նույն տեղում, IV, 36, էջ 98:*

[10] *Նույն տեղում, IV, 34, էջ 98:*

«Աշխարհագրության» և բազմաթիվ այլ գրքերի հեղինակ Ստրաբոնի (Ք.ա. 63 - Ք.հ. 20 թթ.) տեղեկությունները: Որոշ դեպքերում նրա հաղորդած տեղեկությունները եզակի են, առանց որոնց հնարավոր չէ բավարար չափով կողմնորոշվել Ք.ա. II-I դդ. հայոց պատմության բազմաթիվ հարցեր ուսումնասիրելիս: Ըստ նրա հաղորդման՝ հայերի տնտեսության երկրորդ ճյուղը եղել է անասնապահությունը: Նրա վկայությամբ «Հայաստանում բուծում էին մեծաքանակ պատերազմական ձիեր...»[1]: Ապա տեղեկացնում է, որ Հայաստանում բուծում էին «Նեսեական» կոչվող հատուկ ցեղի ձիեր՝ տարեկան 20 հազար մտրուկ՝ պարսից թագավորին որպես տուրք տալու համար: Պատմիչը հիշատակում է նաև ձիաբուծության նպատակասլաց, ինտենսիվ զարգացմանը նպաստող ընդարձակ արոտավայրերի առկայությունը Հայկական լեռնաշխարհում: Հայաստանը «շատ հարուստ է ձիաբուծական արոտներով, որոնք մարականներից վատ չեն, այնպես, որ Նեսեական ձիեր այնտեղից էլ են բերում, որ գործ էին ածում Պարսից թագավորները, և Հայաստանի սատրապը Պարսից թագավորին ուղարկում էր տարեկան 20.000 քուռակ՝ Միհրական տոների համար»[2]: Ստրաբոնի հավաստմամբ՝ Արտավազդը վեց հազար զրահապատ ձիավորներով զորահանդես կատարեց, երբ Անտոնիոսի հետ Մարաստան արշավեց: Ռազմական նպատակների և արքունական շքահանդեսների կազմակերպումից բացի՝ ձին որպես փոխադրամիջոց էր ծառայում հատկապես բարձր խավի համար:

Հնուց ի վեր Հայաստանը հայտնի է եղել որպես լավագույն տոհմական ձիերի հայրենիք: Տոհմական ձիաբուծությամբ լայնորեն զբաղվելու մասին է վկայում Ստրաբոնը: «Հայաստանը ձիաբուծության համար հատկապես հարուստ է արոտներով: Կա մի մարգագետին... որի մեջ ասում են, թե 50,000 զամբիկ էր արածում Պարսից իշխանության ժամանակ: Ասում են նաև, թե այս երամակները արքայական էին, և այն Նեսեական ձիերը, որ Պարսից թագավորները գործ էին ածում նրանց ազնվության և մեծության պատճառով, դուրս էին գալիս այդ երամակներից և կամ Հայաստանից: Սրանք առանձին ձև ունեին և ինչպես այժմ Պարթևական կոչված ձիերը, տարբեր են Հունական և մեզ մոտ եղած այլ տեսակի ձիերից»[3]: Բացի այդ, հայկական նժույգները թեև պարսկականից փոքր էին, սակայն չափազանց ուժեղ էին և ծառայում էին որպես հիմնական փոխադրամիջոց:

Ստրաբոնի հավաստմամբ՝ հայերը օգտվում էին ամառային արոտավայրեր ընտանիքի մի մասով մեկնելու սովորույթից՝ մեր հայրենիքը համարեով ամառային արոտավայրերով հարուստ երկիր: Հունական և հռոմեական անտիկ պատմագիրների երկերի՝ Հայաստանի և հայերի մասին առավել հանգամանալի բնութագրումներին է անդրադարձել տողերիս հեղինակը[4]:

Այսպիսով, հնագույն և հին դարաշրջաններում Հայկական լեռնաշխարհի ալպյան ճոխ արոտներով հարուստ լինելու շնորհիվ զարգացած է եղել անասնապահությունը: Հնագույն ժամանակներից ի վեր Հայաստանում անասնապահությունը կրել է սարվորային բնույթ, այսինքն՝ ամռան ամիսներին մինչև ուշ աշուն անասունները քշվում էին սարերի ալպյան արոտները, իսկ ձմեռը՝ դաշտավայրերը: Հայկական լեռնաշխարհում հավասարապես զարգացած է եղել ինչպես մանր եղջերավոր անասունների խաշնարածությունը, նույնպես և խոշոր եղջերավոր անասունների բուծումը, թեև լեռնային շրջաններում խաշնարածության դերն ավելի մեծ էր: Պահվել են նաև գոմեշներ, ձիեր, ջորիներ, ավանակներ, որոշ վայրերում՝ ուղտեր: Բուծվող ձիերն ու ջորիները լավ համարում են ունեցել և դրվատանքի են արժանացել հին հունական և հռոմեական պատմագիրների կողմից: Դեռևս բրոնզի դարաշրջանում տնտեսական կյանքի վերելքի պայմաններում իրականացվել էր աշխատանքի բաժանումը երկրագործների և անասնապահների միջև:

---

[1] *«Օտար աղբյուրները հայերի մասին», «Հունական աղբյուրներ», 1, Ստրաբոն: Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Ե., 1940, գիրք XI, XIV, 4:*

[2] *Տե՛ս Ստրաբոն, գիրք, XI, XIV, 9:*

[3] *Ստրաբոն, գիրք XI, XIII, 7:*

[4] *Տե՛ս Նահապետյան Ռ., Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ակգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Ե., ԵՊՀ հրատ., 2018, 241 էջ:*

Рафик Наапетян, АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ). Согласно археологическим материалам стоянок, характерных для энеолитической культуры V – первой половины IV тыс. до н.э., скотоводство было одним из основных занятий коренного населения Армянского нагорья. Начиная с этого времени, крупный рогатый скот использовался в земледелии в качестве тягловой силы и вместе с мелким рогатым скотом обеспечивал также растущую потребность в мясо-молочных продуктах, коже, текстиле. В качестве древних скотоводческих центров упоминались страна Шуприя (Сасун), бассейн озера Севан, «долина Туараци» (Туарацатап) в верховье реки Арацани, провинции Диаухи (Тайк), Джабаха (Джавахк), Тариуни (Даруйнк), Абилиани (Абеганк), Эриахи (Ширак) и др.

Еще в эпоху бронзы в Армянском нагорье скотоводство перешло к сарворской форме интенсивного развития: в летние месяцы и до поздней осени скот отгонялся в горы на альпийские пастбища, а зимой - на равнины. В бронзовом веке в условиях подъема экономической жизни осуществлялось общественное разделение труда между земледельцами и скотоводами. Греческие и римские историки античности восхищались армянским племенным коневодством. Лошадь в древней Армении использовалась исключительно в военных целях, для царских парадов, в коннице.

Ключевые слова: *Армянское нагорье, животноводство, древний очаг, коренные племена, развитие, коневодство, Арцах, ахеменидский период, хозяйство.*

Rafik Nahapetyan, ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES). According to the archaeological materials of the sites characteristic of the Eneolithic culture of V - the first half of IV millennium BC, cattle breeding was one of the main occupations of the indigenous population of the Armenian Highlands. Since that time, cattle has been used in agriculture as drag power and, together with small cattle, also provided the growing demand for meat and dairy products, leather and textiles. The country of Shupria (Sasun), the basin of Lake Sevan, the “valley of Tuaratsi” (Tuaratsatap) in the upper reaches of the Aratsani River, the Diauha (Tayk) province, Jabakh (Javakhk), Tariuni (Daruink), Abiliani (Abehank), Eriahi (Shirak) and others have been mentioned as ancient cattle-breeding centres.

Since the Bronze Age in the Armenian Highlands, cattle breeding has passed to a Sarvor form of intensive development: in the summer months and until the late autumn, cattle was transported to the mountains on the Alpine pastures, and in winter cattle was taken to the plains. The social division of labor between farmers and cattle-breeders has been carried out under the conditions of economic life growth in the Bronze Age. The Greek and Roman historians of antiquity admired the Armenian tribal horse breeding. The horse in ancient Armenia has been used exclusively for military purposes, for the royal parades and in the cavalry.

Key words: *Armenian highland, animal breeding, ancient centre, indigenous tribes, development, horse breeding, Artsakh, Achaemenid period, economy.*